



# ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Վարպայ Սուրբ Խաչ  
29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1  
Ծանուցումներ էջ 2

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳԻՐՔԵՆ (3.18-26)

**Ի**մաստութիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները եւ ապահովութիւն կու տայ անոնց՝ որոնք իրեն կը կռթնին՝ որպէս Տիրոջ։ Իր իմաստութեամբ էր որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները։ Իր հանճարով է որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն։

Որդեակ, իմաստութենէն մի՛ բաժնուիր բնաւ. խրատներուս եւ խորհուրդներուս

հետեւէ՛, որպէսզի կեանք

... խրատնեւ- ունենաս, չնորհքներով  
րուս եւ զարդարուիս, մարմինդ  
խորհուրդ- առողջ մնայ եւ ոսկորներդ  
ներուս հետեւէ՛, հանգստանան։ Որպէսզի  
որպէսզի կեանք  
ունենաս, չնորհքներով  
հետեւէ՛, ունենաս, չնորհքներով  
ունենաս... առողջ մնայ եւ ոսկորներդ  
առանց երբեք գայթելու.  
ցերեկը անվախ նստիս եւ

գիշերը քաղցր նինջով քնանաս։ Ուստի  
մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ  
ալ ամբարիշտներու յարձակումներէն.  
որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ  
պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ  
որոգայթներէն։

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ  
(65.22-25)

**Ա**յսպէս կ'ըսէ Տէրը.- «Կեանքի ըլլայ իմ ժողովուրդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վայելեն պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վայելեն իրենց ծանր աշխատանքին վայելեն պիտի չծնին, որովհետեւ Աստուծմէ օրհնուած սերունդ մը պիտի ըլլան, թէ՛ իրենք եւ թէ իրենց զաւակները։ Տակաւին իրենք չկանչած՝ պիտի լսեմ զիրենք. դեռ իրենց աղօթքը չաւարտած՝ պիտի հարցնեմ. “Ի՞նչ կ'ուզէք”։ Այն ատեն գայլն ու գառը միասին պիտի ճարակին. առիւծը եղան պէս յարդ պիտի ուտէ եւ օձը հողով պիտի սնանի. ոեւէ մէկուն պիտի չդպչին եւ պիտի չվնասեն իմ սուրբ լերանս վրայ», կ'ըսէ Տէրը։

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԵՆ  
(6.14-18)

**Գ**ալով ինծի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ։ Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար։ Կարեւորը մարդուս

թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ,  
այլ նոր արարած ըլլալը։ Թող Աստուծոյ  
խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան  
բոլո՛ր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին  
համաձայն կ'ապրին. բոլո՛ր անոնց՝ որոնք  
իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն։

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխար-  
հիկ հոգերով թող զիս չնեղէ, որովհետեւ ես  
Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս  
վրայ վէրքերուն սպիները կը վկայեն։

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի  
շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ։ Ամէն։

### ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ Ա.ԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՄԱՏԹԷՈՍԻ (24.30-36)

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
Ապա մարդու Որդիին նշանը  
պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի

#### Հոգեւազաւեան

Զեր արօնակարութիւնները  
Նկաօրօք ԿաՏարեթէք ԿաՊոՒԵԼՈՎ  
ԵԿԵՂԵՑԻ ԴԻԱԿԱԶՏՈՒՆ

514 331 5445 x202 թիւն

Այթելեթ'ք Եկեղեցիոյ  
Դրաւաւոր էօն

Եւ Զեր Համառիմար յայտնեթէք  
(like).

[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

Այթելեթ'ք նաեւ

Ս. Յակոբ Առաջնորդաւար Մայր  
Եկեղեցի Կայքէօն՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ  
տեսնեն մարդու Որդին որ կու զայ երկինքի  
ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ  
մեծ փառքով։ Երբ մեծաձայն փողը հնչէ,  
ան իր հրեշտակները պիտի զրկէ, որպէսզի  
հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս  
կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ  
միւսը։ Թզենին թող ձեզի օրինակ ըլլայ։ Երբ  
տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան  
եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը  
մօտ է։ Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս  
կատարուին, գիտցէք թէ մարդու Որդիին  
գալուստը մօտ է։ Վստա՛հ եղէք, որ այս  
սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի  
պատահին։ Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը  
անհետանան, խօսքերս պիտի չանհետանան։

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ Երբ պիտի գայ այդ  
օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները,  
ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»։

#### Սոյս թերթիւն

Հարաւական Հերթականութեամբ  
Ե-Նաւակով ԱՏՁԱՎՈՒ ՀԱՎԱՐ ԳՐԵՑԵՔ  
egglise@sourphagop.net Ե-ՆԱՍՖԻՒՆ:

#### ՀԻՎԱԴԱԵՐՈՒ ԱՅԺԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռածայնել  
Արժ. S. Գառնիկ  
Աւ. Ջին. Գոյունեանի.  
514 909 5203 թիւն։

#### ՏՆՕՐՀՆԵՔ

Տնօրինէք փափաքող ընտանիքները,  
թող բարեհաճին դիմել  
S. Գառնիկ Աւ. Ջին. Գոյունեանի,  
հեռածայնելով  
514 909 5203 թիւն։